Գեսաշենն օրհասի պահին

Վերջին մի քանի օրը Ադրբեջանի ղեկավարությունը սադրիչ գործողություններ է ծավալել Արցախի ամբողջ տարածքում եւ հանրապետության սահմանամերձ բոլոր շրջաններում: Դրությունը խիստ լարված է: Կրակոցները չեն դադարում Մարտակերտի շրջանի Կիչան (Կեչուտ), Արծվաշեն (Սեյսուլան) եւ այլ գյուղերում, Մարտունու շրջանի Ավդուռ-Մյուրիշեն ձորակում, Ասկերանի շրջանի Քարին Տակ, Միխթարաշեն բնակավայրերում: Դրությունը շատ լարված է Ստեփանակերտում: Գնդակոծությունները չեն դադարում Շահումյանի շրջանի գյուղերում, Գետաշենում եւ Մարտունաշենում:

Գնդակոծության են ենթարկվել Տավուշի, Կապանի, Գորիսի եւ Երասխավանի մի շարք բնակավայրեր:

Ապրիլի 28-ին ԽՍՀՄ ներքին զորքերը ադրբեջանական օմոնականների մասնակցությամբ խուզարկության են ենթարկել Հաղրութի շրջանի բոլոր հարթավայրային գյուղերը: Ձերբակալված են 38 մարդ, որոնց տարել են հիմնականում Ֆիզուլիի ճանհանական կալանքի կետը: Նույն շրջանի Տող գյուղում բռնագրավել են հայկական հանձարանիշով մեքենաները: Հարձակում է կատարվել Շահումյանի շրջանի Մանաշիդ գյուղի վրա:

Գրեթե չորս կողմից շրջապատվել եւ կրակում են Գետաշենի վրա՝ հենց զինվորների հարեւանությամբ:

Ապրիլի 29-ին գնդակոծվել է Մարտունաշեն եւ Գետաշեն գյուղերը՝ Ղուշչի-Արմաղիր եւ Սարիտաղ գյուղերի կողմից: Գնդակոծումներ են կատարվել նաեւ զրահամեքենաներից: Ժամը 22:30-ին կրակոցները դադարել են երեք կողմից եւ շարունակվել մինչեւ առավոտյան ժամը 7-ը: Գյուղը շրջապատված է:

Երեկ, ապրիլի 30-ին, խորհրդային ներքին զորքերի մի խումբ ներխուժեց Գետաշեն՝ հայ բնակչությանը ահաբեկելու եւ զինաթափելու նպատակով: Վրդովված գյուղացիները պատանդ վերցրին 12 զինվորների, որոնք էլ իրենց ներքին՝ հայերին: Փոխադարձ գնդակ է չհայտարարված պատերազմ: Ռմբակոծումներից ավերվել եւ հրդեհվել են տասնյակ տներ: Գյուղի բնակչությունը աշխարհազորայինների հետ պաշտպանվում է: Ռազմական ուղղաթիռով Շահումյան մեկնած Հայաստանի պաշտոնատար անձանց եւ խորհրդային զինված ուժերի ներկայացուցչին չի թույլատրվել մոտենալ հայկական գյուղերին եւ պաշտպանվողներին սնունդ, աղ եւ ծխախոտ հասցնել: Բանակցությունների առաջարկությունը կարուկ մերժվել է:

Միեւնույն ժամանակ դրությունը լարված է նաեւ Նախիջեւանի սահմանում, Նոյեմբերյանում եւ Իջեւանում: Ըստ տեղեկությունների, այն հրահրում են հիմնականում խորհրդային զինված ուժերը:

Երեկ երեկոյան, Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշեց դեռեւս մեկ անգամ, որ գնահատական տրվեց ստեղծված իրադրությանը: Այն դարձվեց որպես կենտրոնի կողմից դեպի անկախություն ընթացող Հայաստանի վրա ուղղակի ճնշում: Արցախը եւ նրան հարակից հայկական շրջանները կենտրոնի ձեռքում միակ խաղաթուղթն են, որով նա կարող է ապակայունացնել Հայաստանի ներքին իրադրությունը, հշվեց այնտեղ:

Գերագույն խորհուրդը կազմեց Արտակարգ իրավիճակի հանրապետական ժամանակավոր խորհուրդ՝ կազմված ԳԽ եւ նախարարների խորհրդի նախագահությունից եւ խորհրդարանում ներկայացված հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարներից: Խորհրդին իրավունք վերապահվեց ընդունելու հանրապետության անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովմանն ուղղված որոշումներ:



Գերագույն խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որ մասնավորապես ասվում էր, թե Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների քաղաքականությունը Հայաստանի խորհրդարանը գնահատում է որպես հայ ժողովրդի եւ նրա օրինական իշխանությունների դեմ ուղղված պետական ահաբեկչության քաղաքականություն, իսկ իրականացվող գործողությունները՝ որպես ագրեսիա Հայաստանի Հանրապետության դեմ: Գերագույն խորհուրդը հայտարարում է, թե իրավիճակի հետագա սրման եւ դրա հետեւանքների ողջ պատասխանատվությունը կրում են ԽՍՀՄ պրեզիդենտը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, ԽՍՀՄ պաշտպանության եւ ներքին գործերի նախարարությունները, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեն: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը պնդում է՝ անհապաղ ԽՍՀՄ ժողպատգամավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրելու պահանջը՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու ելք փնտրելու համար:

Այնուհետեւ Գերագույն խորհուրդը դիմում է աշխարհի ժողովուրդներին, պետություններին, պառլամենտներին եւ կառավարություններին, միութենական հանրապետություններին՝ ջանքեր գործադրել հայ ժողովրդի դեմ ուղղված ագրեսիան դադարեցնելու համար:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ շրջանում ապրիլի 30-ի լույս գիշերը, հատկապես Բաղանիս-Այրումի կողմից հրետանային կրակ է բացվել Ոսկեպար, Ծաղկավան եւ Իջեւանի շրջանի Գետաշեն գյուղերի ուղղությամբ, ինչը ստիպել է Ոսկեպարի ծայրամասի տների բնակիչներին երեխաներին եւ կանանց տեղափոխել ավելի ապահով վայր: Սակայն, օմոնականների կրակը, որին միացել է խորհրդային բանակի հրետանին, չի թողել կրակց նահանջել:

Կեսգիշերին ժամը 12:20-ին, Ոսկեպար գյուղի վերեւում հայտնվել են երկու ուղղաթիռ, որոնցից մեկը հրթիռ է արձակել գյուղի վրա: Իսկ Խորեմլուի կողմից հրանոթներով կրակ է բացվել Ծաղկավան եւ Իջեւանի Գետաշեն գյուղերի վրա:

Վերջին ժամ

— Ապրիլի 30-ին, ժամը 18-ին խորհրդային բանակն ու օմոնականները համատեղ հարձակում են գործել **Գետաշենի** եւ **Մարտունաշենի** վրա: Գետաշենի հայկական ռադիոկայանի տվյալներով, կորքերի եւ օմոնականների կրակից կոհվել են 23 հոգի, կան տասնյակ վիրավորներ:

Ժամը 21:20-ին, ռադիոկայանը հաղորդել է, որ սարսափելի բաներ են կատարվում Գետաշեն խուժած կորքի եւ օմոնականների կողմից, եւ թե սա գուցե իր վերջին հաղորդումը լինի:

Գեսաշենը գրավված է

Կեսգիշերին, երբ մեր թերթը տպագրության էր գնում, ստացվեց դժնի լուրը. Գետաշենը գրավված է: Մինչեւ վերջին ուժերը պաշտպանվելուց հետո, հերոսական ինքնապաշտպանները տեղի են տվել խորհրդային բանակի եւ ավերի օմոնականների գերազանց ուժի առաջ:

Ըստ հավաստի տեղեկությունների, շուրջ 3 հազար հոգի ունեցող գյուղից ընկել են 27 զոհ եւ տասնյակ վիրավորներ:

— Ռ.Ա.Կ. Երեւանի ժամլո գրասենյակը, որ երեկ երեկոյան ժամը 5-ից սկսած ժամը ժամին տեղեկություններ էր տալիս արտերկրի բոլոր թերթերին, BBC ռադիոկայանին եւ միջազգային լրատու գործակալություններին, Գետաշենի անկման լուրը գիշերվա ժամը 11-ն անց 45-ին հաղորդեց նաեւ, Ռոբերտ Մավիսակալյանի խոսքով, CNN ամերիկյան հեռատեսությանը եւ նրա միջոցով՝ ողջ աշխարհին: □